

(ՏՄ՝ս H. Delehaye, Les origines du Culte des Martyr, էջ 210): Եզիպտոսի մէջ ալ, Թեբայիտի մօտ, յանուն Ս. Պողիկտոսի եկեղեցի մը կառուցուած պէտք է ըլլայ, այն պատճառով որ նոյն տեղը գտնուած հողէ կանթեղներէն ոմանք նուիրուած են ի յիշատակ նոյն սուրբին, ինչպէս յայտնի կ'ըլլայ Լուվրի Թանգարանը պահուած նոյն կանթեղներուն արձանագրութիւններէն. (ՏՄ՝ս Martigny, Dict. des Antiquités chrétiennes. Art. Lamps. էջ 408): Կրիզոստոմոս Եպոս. Տուրացին, իր Հրաշից և Պատմութիւն Փռանկաց գիրքերուն մէջ Պողիկտոսի պաշտամունքի նկատմամբ փոսնկ թագաւորաց և Կ. Պոլսոյ ժողովրդեան հին սովորութիւնները կը յիշատակէ և կը նկարագրէ այն ուխտազանցութիւնները, որ պատժուած կը համարուին Պողիկտոսի կողմէն: Ֆրանսացի հին թագաւորներն ալ յանուն Ս. Պողիկտոսի կը հաստատէին իրենց դաշնագրութիւնները (ՏՄ՝ս Les Petits Bollandistes, Vies des Saints, էջ 484-85. նաև Յուշիկի, Բ. էջ 239):

4. Հայոց Ս. Պողիկտոսի վանքը Երուսաղէմի մէջ.

Ինչպէս որ տեսանք վերև. Ս. Պողիկտոսի պաշտամունքը վաղուց տարածուած ըլլալով Արևելքի մէջ, կարելի չէր որ Հայք ետ մնային յարգելէ հայադարձ վկային յիշատակը: Բուն Հայաստանի մէջ չենք հանդիպիր սուրբին անուամբ կառուցուած սրբավայրի մը: Ս. Քաղաքին մէջ է որ կը կառուցուի Ս. Պողիկտոսի անուամբ վանք մը, հայ նախարարներու բարեպաշտութեամբ հիմնարկուած վանօրէից շարքին մէջ: Այս պարագան հաստատելու համար դարձեալ պիտի դիմենք յիշատակաց արժանի Անաստաս վրդ. ի Յուլիանին, ուր կը կարդանք հետևեալը. «Սուրբ Պողիկտոսի վանքն, յիկեալ Չորրորդապետին Հայոց ի հիւսիսոյ կողմն»: Այս է միակ յիշատակագրութիւնը այս վանքին նկատմամբ: Ո՛չ օտարներուն և ո՛չ ալ մերայնոց քով ծանօթագրուած չենք գտներ Պողիկտոսի հայ վանքը՝ որ յերուսաղէմ, բայց պատմականօրէն ան գոյութիւն ունէր, և շատ կանուխէն քանդուած ըլլալուն ոչ ոքի ծանօթ էր: Անաստաս վրդ. ի այս հակիրճ տողերը երկու հարցում կը դնեն մեր առջև. ո՞վ շինել տուաւ այս վանքը, և ո՞ւր շինուեցաւ: Ըստ կարելոյն պիտի ջանանք տալ այս երկու հարցումներուն պատասխանը: